Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2026 թվականի ....-ի N ..... հրամանի

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2023 թվականի օգոստոսի 31-ի N 32-Լ հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) մշակութային ժառանգության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Նախարարության և սույն կանոնադրությամբ, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) հրամաններով և այլ իրավական ակտերով:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, դրանում փոփոխություններ և լրացումներ է կատարում Նախարարը:

4. Վարչության կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը:

5. Վարչության աշխատակիցները կարող են ընդգրկվել պետական կառավարման բնագավառում որոշակի գործառույթների իրականացման նպատակով ստեղծվող հանձնաժողովների կազմում, աշխատանքային և այլ խմբերում:

6. Վարչության անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակութային ժառանգության վարչություն:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Վարչության նպատակն է ապահովելու մշակութային ժառանգության պահպանությունը, ուսումնասիրումը և հանրահռչակումը:

8. Վարչության խնդիրներն են՝

1) նպաստել մշակութային ժառանգության պահպանությանը, ուսումնասիրությանը, օգտագործմանը, հանրահռչակմանը, զարգացմանը ու ծառայությունների մատուցմանը,

2) ստեղծել ազատ ու մատչելի ծառայությունների մատուցման պայմաններ, մշակութային արժեքներին հաղորդակցվելու նպատակով,

3) կանխարգելել և կանխել մշակութային արժեքների ապօրինի արտահանումը, ապօրինի ներմուծումն ու մշակութային արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի ապօրինի փոխանցումը,

4) նպաստել միջազգային պայմանագրերի շրջանակներում այլ պետությունների տարածքներում գտնվող ազգային մշակութային ժառանգության պահպանությանը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԵՆ

9. Վարչությունն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառույթներն՝ ըստ բաժինների.

9.1. Մշակութային ժառանգության պահպանության և զարգացման բաժինը՝

1) մշակում է մշակութային ժառանգության (այսուհետև՝ Ժառանգություն) ոլորտի հայեցակարգերի, ռազմավարության, ոլորտը կարգավորող իրավական ակտերի և այլ փաստաթղթերի նախագծեր, ինչպես նաև Նախարարին և Գլխավոր քարտուղարին

ներկայացնում է առաջարկություններ գործող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին, ապահովում է իրավական ակտերի կիրարկումը,

2) մշակում է Ժառանգության ոլորտի պետական, նպատակային ու զարգացման կարճաժամկետ ծրագրեր, առանձին միջոցառումներ և դրանց իրականացման ձևերն ու կարգերը և նպաստում դրանց իրականացմանը,

3) մասնակցում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակմանը՝ Ժառանգության ոլորտի մասով ներկայացնում է առաջարկություններ՝ միջնաժամկետ և տարեկան բյուջետային ծախսային ծրագրերի, Նախարարության գործունեության տարեկան ծրագրի, պետական պատվերի ձևավորման վերաբերյալ,

4) ապահովում է Ժառանգության բնագավառի պետական քաղաքականության վերլուծությունը, ուսումնասիրում զարգացման միտումները և օրինաչափությունները և առաջարկություններ է ներկայացնում դրա կառավարման սկզբունքների, իրականացման ձևերի ու կարգերի բարելավման վերաբերյալ,

5) մշակում է Ժառանգությանը վերաբերող մեթոդական ցուցումներ, պարզաբանումներ, ուղեցույցներ, արժեքների գրանցման, դասակարգման, ցուցակների կազմման, հաշվառման, պահպանության, պաշտպանության, օգտագործման, համալրման սկզբունքները, կանոնները, չափանիշները (նորմատիվներ) և չափորոշիչները,

6) մասնակցում է պատմամշակութային ժառանգության ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի պետական քաղաքականության ձևավորմանը,

7) մասնակցում է պատմամշակութային ժառանգության ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի միջազգային կազմակերպությունների աշխատանքներին,

8) համագործակցում է ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան՝ օտարերկրյա պետությունների Ժառանգության պահպանության և օգտագործման բնագավառի լիազոր պետական մարմինների հետ,

9) աջակցում է ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան՝ օտարերկրյա պետությունների տարածքում գտնվող պատմամշակութային ժառանգության հաշվառմանը ու հետազոտմանը,

10) առաջարկներ է ներկայացնում Նախարարին հնավայրեր, հնավայր-թանգարաններ ստեղծելու վերաբերյալ,

11) մասնակցում է Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան Ժառանգության բնագավառին վերաբերվող Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցների պատրաստմանը,

12) ներկայացնում է առաջարկություններ և դիտողություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիների ու իրավաբանական անձանց գրությունների, դիմում-բողոքների վերաբերյալ,

13) ապահովում է ուսումնական, գիտահետազոտական, զբոսաշրջության զարգացման նպատակներով պատմամշակութային ժառանգության վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը,

14) ապահովում է թանգարանային հավաքածուների պետական հաշվառումը, անձնագրավորումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը, համալրումը, ներկայացումը, օգտագործումը և հանրահռչակումը, դրանց ուսումնասիրությունը և վերլուծությունը,

15) իրականացնում է նախարարության ենթակայությամբ գործող թանգարաններում թանգարանային առարկաների պահպանվածության վիճակի և պահպանության պայմանների վերաբերյալ դիտանցումներ,

16) ապահովում է Ժառանգության ոլորտի պետական պատվերի տեղաբաշխման, դրա կատարման ընթացքի հսկողության, արդյունքների ընդունման գործընթացները և ստեղծում տվյալների շտեմարան,

17) ապահովում է պետական սեփականություն համարվող մշակութային արժեքների, թանգարանային հավաքածուների կառավարումը,

18) Նախարարին ներկայացնում է առաջարկություններ պետության առաջնահերթության նախապատվության իրավունքով քաղաքացիներից և իրավաբանական անձանցից Ժառանգության ոլորտի, նրանց պատկանող, առանձին առարկաների գնման վերաբերյալ,

19) ապահովում է մշակութային արժեքների հակահրդեհային ազդանշանային անվտանգության և տեղեկատվության արդիական համակարգերի ներդնումը՝ պետական թանգարաններում,

20) վերահսկում է պետական թանգարաններում թանգարանային առարկաներին և թանգարանային հավաքածուներին հաղորդակցվելու պայմանակարգը (ռեժիմ),

21) կազմակերպում է գիտահետազոտական աշխատանքների իրականացումը մշակութային ժառանգության բնագավառում,

22) համակարգում է Ժառանգության ոլորտի նախարարության ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը,

23) աջակցում է Ժառանգության բնագավառում նոր տեխնոլոգիաների և տեղեկատվական համակարգերի ներդրմանը, ապահովում է Ժառանգության ոլորտի կազմակերպությունների տեխնիկական վերազինումը,

24) աջակցում է ցուցահանդեսների, ցուցահանդես-վաճառքների, աճուրդների, գիտաժողովների, համաժողովների, սեմինարների (այդ թվում՝ միջազգային) և այլ միջոցառումների կազմակերպմանը,

25) մշակում է Նախարարության կողմից համապատասխան մարմիններին և կազմակերպություններին ներկայացվող Ժառանգությանը վերաբերվող զեկուցումների, հաշվետվությունների, առաջարկությունների և այլ փաստաթղթերի նախագծերը,

26) ապահովում է մշակութային ժառանգության ոլորտի՝ հատուկ նպատակներով ստեղծված, միջգերատեսչական, Նախարարին կից գործող և այլ խորհուրդների ու հանձնաժողովների աշխատանքը, առանձին հարցերի վերաբերյալ մասնագիտական եզրակացությունների նախապատրաստումը,

27) կազմակերպում է մշակութային ժառանգության ոլորտի Նախարարության համագործակցությունը Հայաստանի Հանրապետության օրենսդիր և գործադիր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, գիտական ու այլ կազմակերպությունների, ստեղծագործական միությունների հետ, նպաստում շփումների ստեղծմանն ու զարգացմանը, Նախարարին ներկայացնում է առաջարկություններ ՀՀ Կառավարության արտագնա նիստերի օրակարգում ընդգրկելու, մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի, նրանց տարեկան գործունեության գնահատման

վերաբերյալ, ինչպես նաև պետության կողմից Ժառանգության ոլորտի գործիչների շրջանում մրցանակների, պարգևների բաշխման և աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ,

28) մշակում և ապահովում է վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) վարման համակարգը, վարում է Ժառանգության ոլորտի վարչական վիճակագրությունը, ոչ ֆինանսական հաշվետվությունները, համակարգում է նրանց ընթացիկ գործունեությունը, իրականացնում մշակութային կազմակերպությունների հաշվառումը և ստեղծում տվյալների շտեմարան,

29) մշակում է Ժառանգության բնագավառում մասնագետների պատրաստման, վերապատրաստման ու վերաորակավորման ծրագրերը, մասնագիտական որակավորման չափանիշները՝ միջազգային մասնագիտական չափորոշիչների և նորմերին համապատասխան, համակարգում է նախապատրաստման և իրականացման գործընթացը,

30) նախապատրաստում և համակարգում է տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմանն ուղղված դասընթացների կազմակերպումը,

31) մշակում է Ժառանգության բնագավառում մասնագետների պաշտոնական պարտականությունների որակավորման բնութագրերը,

32) մշակում և համակարգում է Ժառանգության թվանշանացված շտեմարանների և ներքին կապուղու ծրագրերի ստեղծումը, աջակցում է պետական միասնական տեղեկատվական համակարգի զարգացմանը,

33) մասնակցում է Հայաստանի Հանրապետության պատմամշակութային ժառանգությունը ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքները Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում, ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկերում ընդգրկելուն,

34) ըստ անհրաժեշտության, արձագանքում է զանգվածային լրատվության միջոցներով քաղաքացիների և/կամ իրավաբանական անձանց կողմից ուղղված հարցերին և բարձրացված ահազանգերին,

35) ապահովում է հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ մատուցած քաղաքացիների մահվան դեպքում մահարձանի պատրաստման, տեղադրման, գերեզմանի բարեկարգման աշխատանքների իրականացման աշխատանքները,

36) ապահովում է գրադարանների բնագավառի պետական քաղաքականության վերլուծությունը, ուսումնասիրում զարգացման միտումները և օրինաչափությունները և առաջարկություններ է ներկայացնում դրանց կառավարման սկզբունքների, իրականացման ձևերի ու կարգերի բարելավման վերաբերյալ,

37) ապահովում է գրադարանային հավաքածուների պետական հաշվառումը, անձնագրավորումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը, համալրումը, ներկայացումը, օգտագործումը և հանրահռչակումը, դրանց ուսումնասիրությունը և վերլուծությունը, ինչպես նաև հավաքածուներից ֆիզիկապես մաշված գրականության դուրսգրումը,

38) նպաստում է մշակութային, գիտական և կրթական հաստատությունների, գիտահետազոտական կենտրոնների, գրադարանների, արխիվների գործունեությանը, ցուցաբերում է աջակցություն գիտական, մշակութային կազմակերպություններին,

39) ապահովում է հակահրդեհային ազդանշանային անվտանգության և տեղեկատվության արդիական համակարգերի ներդնումը՝ պետական գրադարաններում,

40) ապահովում է գրադարանների գործունեության, այդ թվում՝ տեղեկատվական-գրադարանային ցանցերի ստեղծման և զարգացման աշխատանքների միջգերատեսչական համակարգումը,

41) մշակում է նախարարության ենթակայությամբ գործող գրադարաններում գրքային հավաքածուներից օգտվելու կանոնակարգ և առաջարկություններ է ներկայացնում Նախարարին գրադարանային հավաքածուների պահպանվածության ապահովման վերաբերյալ,

42) կազմակերպում է ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված գործընթացները՝ միասնական մաքսային տարածքով պայմանավորված իրավական ակտերի, համաձայնագրերի, համակարգի ներդրման գործընթացների շրջանակներում փաստաթղթերի ուսումնասիրության, առաջարկների ներկայացման, միջգերատեսչական համակարգող աշխատանքային խմբերում ներգրավվածության, ԵԱՏՄ օրենսդրական դաշտի ներդաշնակեցման գործընթացների շրջանակներում իրականացվող աշխատանքները,

43) մշակում է մշակութային զբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագրեր,

44) իրականացնում է ազգային պահուստում հաշվեգրման ենթակա արժեքների հաշվառումը, պահպանությունը, վերականգնումը և կառավարության հանձնարարությամբ դրանց ցուցադրումը,

45) իրականացնում է օրենսդրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթներ:

9.2. Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման բաժինը՝

1) մշակում է մշակութային արժեքների արտահանման և ներմուծման ոլորտի կարգավորող իրավական ակտերի և այլ փաստաթղթերի նախագծեր, ինչպես նաև Նախարարին, նախարարի տեղակալին և Գլխավոր քարտուղարին ներկայացնում է առաջարկություններ գործող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին, ապահովում իրավական ակտերի կիրարկումը,

2) մասնակցում է մշակութային արժեքների արտահանման և ներմուծման հետ կապված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակմանը՝ ոլորտի մասով ներկայացնում է առաջարկություն՝ միջնաժամկետ և տարեկան բյուջետային ծախսային ծրագրերի, նախարարության գործունեության տարեկան ծրագրի, պետական պատվերի ձևավորման վերաբերյալ,

3) տալիս է մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ)՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան,

4) տարբեր տեղեկատվական աղբյուրների և նյութերի ուսումնասիրության միջոցով հայտնաբերում և հաշվառում է այլ պետություններում գտնվող ազգային մշակութային արժեքները, կազմում դրանց հաշվառման մատյանն ու ստեղծում այդ արժեքների մասին տվյալների շտեմարան,

5) կազմակերպում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր մշակութային արժեքների ցանկի ստեղծման ու համալրման գործընթացը, արգելում այդ ցանկում ներառված արժեքների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանումն ու ժամանակավոր արտահանումը,

6) ստեղծում է մշակութային արժեքների տեղեկատվական շտեմարան և դրա ու գողացված, կորած, հափշտակված մշակութային արժեքների շտեմարանների տվյալների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով նախատեսված կարգով

ձեռնարկում է միջոցներ՝ մշակութային արժեքների ապօրինի արտահանումն ու ապօրինի ներմուծումը կանխարգելելու, դրանց նկատմամբ սեփականության իրավունքի ապօրինի փոխանցումը կանխելու, ինչպես նաև մշակութային արժեքների սեփականատերերի գրանցված իրավունքները պաշտպանելու համար,

7) Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս տարածում է տեղեկատվություն մշակութային արժեքների անհետացման, կորստի, հափշտակության փաստերի մասին,

8) հաշվառում է մշակութային արժեքների պահպանական ցուցակում գրանցված կամ գրանցման ենթակա՝ ժամանակավոր արտահանվող մշակութային արժեքները, արձանագրում ժամանակավոր արտահանումից վերադարձված այդ արժեքների իսկությունը (նույնականացումը), իսկ սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետություն չվերադարձվելու դեպքում՝ միջոցներ է ձեռնարկում դրանց հետբերման համար,

9) փորձագիտական եզրակացության հիման վրա ներկայացնում է առաջարկություններ արտահանման համար հայտագրված՝ մշակութային արժեքների պահպանական ցուցակում գրանցման չափորոշիչներին համապատասխանող, իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականությունը հանդիսացող մշակութային արժեքների՝ պետության կողմից գնման նախապատվության իրավունքի իրականացման վերաբերյալ և կազմակերպում է գործընթացի իրականացումը,

10) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է մշակութային արժեքների պահպանական ցուցակում պետական սեփականություն չհամարվող մշակութային արժեքների՝ կամավոր սկզբունքով գրանցման գործընթացը, կազմում այդ արժեքների ցուցակը և սեփականատերերին տալիս տեղեկանք պահպանական ցուցակում դրանք գրանցելու կամ գրանցման ենթակա չլինելու մասին,

11) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունում է որոշում մշակութային արժեքների արտահանման ու ժամանակավոր արտահանման հնարավորության կամ անհնարինության մասին և տալիս է մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի՝ սահմանված նմուշի եզրակացություն,

12) կազմակերպում և իրականացնում է կերպարվեստի ու դեկորատիվ-կիրառական արվեստի բնագավառի՝ վերջին 50 տարում մահացած այն հեղինակների ցանկի ստեղծման աշխատանքները, որոնց ստեղծագործությունները Հայաստանի Հանրապետությունից կարող

են արտահանվել միայն մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի եզրակացության հիման վրա,

13) արտահանման կամ ժամանակավոր արտահանման համար հայտագրված առանց սահմանափակումների արտահանման ենթակա մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների լուսանկարների շրջերեսին վավերացնում է դրանց իսկությունը հայտատուի ցանկությամբ,

14) ընդունում է վերականգնման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածք մշակութային արժեքներ ժամանակավոր ներմուծելու մասին հայտերը, տալիս դրանց իսկության, իսկ վերաարտահանելիս՝ ժամանակավոր ներմուծված մշակութային արժեքների վերականգնման արդյունքը լինելու (նույնականության) մասին տեղեկանքները, հաշվառում այդ արժեքները, հայտերն ու տեղեկանքները,

15) պատրաստում է ժամանակավոր արտահանվող նվագարանի վկայական,

16) իրականացնում է արտահանվող, ժամանակավոր արտահանվող, վերականգնման նպատակով ժամանակավոր ներմուծվող մշակութային արժեքների ու առարկաների տեղեկատվական շտեմարանների համալրման ու դրանց օգտագործման, ուսումնասիրման ու վերլուծության գործընթացները,

17) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է առգրավված կամ բռնագրավված մշակութային արժեքները Հայաստանի Հանրապետության պետական պահոցների (թանգարաններ, արխիվներ, գրադարաններ և այլ մշակութային կազմակերպություններ) մշտական պահպանության կամ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համապատասխան ծառայությանը հանձնելու գործընթացները,

18) կազմակերպում և իրականացնում է նախարարության մշակութային արժեքների փորձաքննություն իրականացնող մասնագետների հավատարմագրման խորհրդի աշխատանքները, ինչպես նաև մշակութային արժեքների փորձաքննություն իրականացնող մասնագետ-հայտատուների հավատարմագրման գործընթացն ու հավատարմագրման վկայագրերի տրամադրման աշխատանքները,

19) իրականացնում է մշակութային արժեքների պահպանությունն ու պաշտպանությունն իրականացնող, ինչպես նաև արտահանումն ու ներմուծումը կարգավորող և վերահսկող պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ կապն ու համագործակցությունը,

20) իրականացնում է ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված գործընթացները՝ միասնական մաքսային տարածքով պայմանավորված իրավական ակտերի, համաձայնագրերի, «միասնական պատուհան» համակարգի ներդրման գործընթացների շրջանակներում փաստաթղթերի ուսումնասիրության, առաջարկների ներկայացման, միջգերատեսչական համակարգող աշխատանքային խմբերում ներգրավվածության, ԵԱՏՄ օրենսդրական դաշտի ներդաշնակեցման գործընթացների շրջանակներում իրականացվող աշխատանքները,

21) ապահովում է «Հազվագյուտ աղեղնավոր նվագարանների պետական հավաքածուի» նվագարանների վարձակալության տրամադրման գործընթացը,

23) մասնակցում է Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու միջոցների մասին Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցների պատրաստմանը,

24) իրականացնում է մոնիթորինգ մշակութային աճուրդային տներում վաճառվող հայկական ծագում ունեցող արժեքների,

25) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվում է Հայաստանի Հանրապետությունում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի տեղեկություններից,

26) ներկայացնում է առաջարկություններ և դիտողություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիների ու իրավաբանական անձանց գրությունների, դիմում-բողոքների վերաբերյալ,

27) իրականացնում է օրենսդրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթներ:

9.3. Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության բաժինը՝

1) մշակում է ոչ նյութական մշակութային ժառանգության (այսուհետև՝ ՈՆՄԺ) ոլորտի հայեցակարգերի, ռազմավարության և ոլորտը կարգավորող իրավական ակտերի և այլ փաստաթղթերի նախագծեր, ինչպես նաև Նախարարին և Գլխավոր քարտուղարին ներկայացնում է առաջարկություններ գործող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին, ապահովում իրավական ակտերի կիրարկումը,

2) մշակում է ՈՆՄԺ ոլորտի պետական, նպատակային ու զարգացման կարճաժամկետ ծրագրեր, առանձին միջոցառումներ և դրանց իրականացման ձևերն ու կարգերը և նպաստում դրանց իրականացմանը,

3) մասնակցում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակմանը՝ ՈՆՄԺ ոլորտի մասով ներկայացնում է առաջարկություններ՝ միջնաժամկետ և տարեկան բյուջետային ծախսային ծրագրերի, Նախարարության գործունեության տարեկան ծրագրի, պետական պատվերի ձևավորման վերաբերյալ,

4) ապահովում է ՈՆՄԺ բնագավառի պետական քաղաքականության վերլուծությունը, ուսումնասիրում զարգացման միտումները և օրինաչափությունները և առաջարկություններ է ներկայացնում դրա կառավարման սկզբունքների, իրականացման ձևերի ու կարգերի բարելավման վերաբերյալ,

5) մշակում է ՈՆՄԺ ոլորտին վերաբերող մեթոդական ցուցումներ, պարզաբանումներ, ուղեցույցներ, արժեքների գրանցման, դասակարգման, ցուցակների կազմման, հաշվառման, պահպանության, պաշտպանության, օգտագործման, համալրման սկզբունքները, կանոնները, չափանիշները (նորմատիվներ) և չափորոշիչները,

6) մասնակցում է ՈՆՄԺ բնագավառի պետական քաղաքականության ձևավորմանը,

7) մասնակցում է ՈՆՄԺ պահպանության և օգտագործման բնագավառի միջազգային կազմակերպությունների աշխատանքներին,

8) համագործակցում է ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան՝ օտարերկրյա պետությունների ՈՆՄԺ պահպանության և օգտագործման բնագավառի լիազոր պետական մարմինների հետ,

9) մասնակցում է Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան ՈՆՄԺ բնագավառին վերաբերվող Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցների պատրաստմանը,

10) ներկայացնում է ՈՆՄԺ ոլորտին վերաբերող առաջարկություններ և դիտողություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիների ու իրավաբանական անձանց գրությունների, դիմում-բողոքների վերաբերյալ,

11) ապահովում է ուսումնական, գիտահետազոտական, զբոսաշրջության զարգացման նպատակներով ՈՆՄԺ վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը,

12) իրականացնում է ՈՆՄԺ արժեքների գույքագրման դիտանցումներ ՀՀ համայնքներում,

13) միջոցներ է ձեռնարկում Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում գտնվող ազգային ոչ նյութական մշակութային արժեքները բացահայտելու և այդ արժեքների հաշվառումն ու հրապարակումը իրականացնելու համար,

14) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով միջոցներ է ձեռնարկում՝ վերականգնելու ոչ նյութական մշակութային արժեքները, այդ թվում նաև ժողովրդական արհեստները,

15) ցուցաբերում է աջակցություն գիտական, մշակութային կազմակերպություններին և արշավախմբերին ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների և ժողովրդական արհեստների ուսումնասիրման, հրատարակման և հանրահռչակման գործում,

16) նպաստում է ՈՆՄԺ պահպանության և պաշտպանության միջոցառումների՝ փառատոների, գիտաժողովների, սեմինարների, համերգների, ցուցահանդեսների, հանդիսությունների, տոների իրականացմանը, ինչպես նաև ՈՆՄԺ բոլոր դրսևորումների կենսունակության ապահովմանն ու փոխանցմանը,

17) կազմակերպում է ՈՆՄԺ արժեքների գույքագրման, ուսումնասիրման, տարածման և հանրահռչակման աշխատանքները,

18) կազմակերպում է գիտահետազոտական աշխատանքների իրականացումը ՈՆՄԺ բնագավառում,

19) համակարգում է նախարարության ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների ՈՆՄԺ ոլորտի գործունեությունը,

20) աջակցում է ՈՆՄԺ ներկայացնող ցուցահանդեսների, ցուցահանդես-վաճառքների, փառատոների, գիտաժողովների, համաժողովների, դասընթացների (այդ թվում՝ միջազգային) և այլ միջոցառումների կազմակերպմանը,

21) մշակում է Նախարարության կողմից համապատասխան մարմիններին և կազմակերպություններին ներկայացվող ՈՆՄԺ վերաբերվող զեկուցումների, հաշվետվությունների, առաջարկությունների և այլ փաստաթղթերի նախագծերը,

22) ապահովում է ՈՆՄԺ ոլորտի՝ հատուկ նպատակներով ստեղծված, միջգերատեսչական, Նախարարին կից գործող ՈՆՄԺ խորհրդի և այլ խորհուրդների ու հանձնաժողովների աշխատանքը, առանձին հարցերի վերաբերյալ մասնագիտական եզրակացությունների նախապատրաստումը,

23) մշակում է ՈՆՄԺ բնագավառում մասնագետների պատրաստման, վերապատրաստման ու վերաորակավորման ծրագրերը, մասնագիտական որակավորման չափանիշները՝ միջազգային մասնագիտական չափորոշիչների և նորմերին համապատասխան, համակարգում է նախապատրաստման և իրականացման գործընթացը,

24) մշակում և համակարգում է ՈՆՄԺ թվանշանացված շտեմարանների ստեղծումը, աջակցում է պետական միասնական տեղեկատվական համակարգի զարգացմանը,

25) մասնակցում է Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության և ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ցանկերում ՈՆՄԺ արժեքների գրանցմանը,

26) ըստ անհրաժեշտության, արձագանքում է զանգվածային լրատվության միջոցներով քաղաքացիների և/կամ իրավաբանական անձանց կողմից ՈՆՄԺ ոլորտին ուղղված հարցերին և բարձրացված ահազանգերին,

27) նպաստում է մշակութային զբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագրերում ՈՆՄԺ ոլորտին առնչվող ուղղությունների ներդրմանը,

28) իրականացնում է օրենսդրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

10. Վարչության ղեկավարը հաշվետու է Նախարարին:

11. Վարչության գործունեությունը համակարգում և ղեկավարում է Վարչության պետը:

12. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում են բաժինների պետերը:

13. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

14. Վարչության պետը, Վարչության պետի տեղակալը, բաժինների պետերը և աշխատակիցները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

15. Վարչության պետի, Վարչության պետի տեղակալի, բաժինների պետերի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվու թյան, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների դրույթները սահմանվում են քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

16. Վարչությունը կազմված է հետևյալ ներքին կառուցվածքային միավորներից՝

16. 1. Մշակութային ժառանգության պահպանության և զարգացման բաժին,

16.2. Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման բաժին,

16.3. Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության բաժին: